«ԿԻԲԵՌՔՎԵՍՏ 2025»

Կիբեռանվտանգության մրցույթ

ԿԱՐԳ

«Քոնթեստս Լաբ» կրթական ՀԿ

20/10/2025

Մրցույթի մասին

«ԿիբեռՔվեստ»-ը 6-9-րդ դասարանների աշակերտների համար նախատեսված **անվճար** թիմային կիբեռանվտանգության մրցույթ է, որը կազմակերպվում է «Քոնթեստս Լաբ» կրթական ՀԿ-ն Հայաստանի Տեղեկատվական Համակարգերի Գործակալության և ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ համատեղ:

Մրցույթը հնարավորություն է տալիս բացահայտելու ու զարգացնելու աշակերտների հետաքրքրությունը տեղեկատվական տեխնոլոգիաների և թվային անվտանգության ոլորտում:

Մրցույթի հիմքում ընկած են հիմնականում տրամաբանական և հետաքրքրաշարժ խնդիրներ և գլուխկոտրուկներ, որոնք միտված են զարգացնել դպրոցականների մոտ տրամաբանությունը, քննադատական մտածողությունը, անվտանգ համացանցային միջավայրում աշխատելու հմտությունները:

Մրցույթի Նպատակները

- Զարգացնել աշակերտների թվային գրագիտությունը և կիբեռանվտանգության հիմնական գիտելիքները
- Զգոնություն ձևավորել համացանցում անվտանգ և պատասխանատու վարքի նկատմամբ
- Զարգացնել վերլուծական մտածողությունն ու խնդիրներ լուծելու ունակությունները
- Զարգացնել թիմային աշխատանքն ու հաղորդակցման հմտությունները
- Ներգրավել ուսուցիչներին և դպրոցներին SS կրթության խթանման գործընթացում
- Նպաստել աշակերտների մասնագիտական կողմնորոշմանն ու հետագա մասնագիտության ընտրությանը
- Զարցացնել աշակերտների՝ թիմում աշխատելու հմտությունները

Մրցույթի ժամկետները

Փուլ	Ամսաթիվ	Ձևաչափ
Գրանցման սկիզբ	2025թ. նոյեմբեր	Առցանց
Առցանց Թեստավորում	2025թ. դեկտեմբեր 14	Առցանց (անհատական)
Եզրափակիչ փուլ	2025թ. դեկտեմբերի 25	Առկա (թիմային)

Ովքե՞ր կարող են մասնակցել

- **6-ից 9-րդ դասարանների** աշակերտներ՝ Հայաստանի բոլոր մարզերից ու Երևանի դպրոցներից
- Մասնակիցները ձևավորում են **5 հոգանոց թիմեր**
- Յուրաքանչյուր թիմ պետք է ունենա **մարզիչ**՝ դպրոցում ՏՏ, մաթեմատիկա կամ այլ առարկա դասավանդող ուսուցիչ

Գրանցման համար

Թիմը պետք է՝

- Ընտրի թիմի անուն և նշանակի թիմի ավագ
- Լրացնի հայտը՝ https://forms.gle/mbaT61P6PrFJxiXYA
- Թիմի յուրաքանչյուր անդամ անհատապես գրանցվի թեստային հարթակում՝ https://cyberquest.contests.am/
- Հարցերի դեպքում կարող եք գրել Քոնթեստս Լաբ կրթական ՀԿ-ի էլ. հասցեին՝ cyberquest@contests.am

Մրցույթին մասնակցության գրանցման վերջնաժամկետը ***դեկտեմբերի 12-ն է:***

Մասնակցությունը

Մասնակցությունը ամբողջովին անվճար է:
Բոլոր կազմակերպչական ծախսերն ապահովվում են Քոնթեստս Լաբ կրթական ՀԿ-ի և գործընկեր կազմակերպությունների կողմից:

Առաջին Փուլ. Առցանց Թեստավորում

- **Ամսաթիվ՝** 2025թ. դեկտեմբեր 14
- **Ձևաչափ՝** անհատական թեստ, անցկացվում է առցանց հարթակում
- **Տևողություն՝** 60 րոպե
- **Բովանդակություն՝**
    - Հետաքրքրաշարժ գլուխկոտրուկներ
    - Տեղեկատվական անվտանգության հիմունքներ
    - Գաղտնաբառերի կառավարում
    - Ցանցային սպառնալիքներ
    - Անվտանգ պահվածք սոցիալական ցանցերում

Թեստի գնահատում՝

- 20 հարց՝ տարբեր բարդության մակարդակներով
- Թիմի ընդհանուր միավորը հաշվարկվում է մասնակիցների միավորների գումարով

Հավասար միավորների դեպքում կարող է կազմակերպվել լրացուցիչ թեստ և կարճ հարցազրույց:

Երկրորդ Փուլ. Թիմային Եզրափակիչ Մրցույթ

- Առցանց փուլի արդյունքներով ընտրվում են լավագույն **10-12 թիմերը**

- **Ձևաչափ՝**

    - 2 ժամ տևողությամբ թիմային խաղ, որտեղ թիմերը պետք է լուծեն երկու կիբեր քվեստ մարտահրավեր - գլուխկոտրուկներ:

    - Թիմի կողմից նախապատրաստված **ներկայացում՝** մինչև 10 րոպե, որին կհաջորդի ժյուրիի հետ 3 րոպեանոց հարցուպատասխան

Ներկայացումը պետք է պատրաստվի կազմակերպիչ թիմի կողմից տրամադրվող ֆլիփչարթի վրա

Գնահատման Համակարգ

◈ Առցանց Թեստ

- 1- 10 հարցերը՝ **4 միավոր**
- 11-20 հարցերը՝ **5 միավոր**

- Առավելագույն թիմային միավոր՝ **450**

Անցողիկ շեմը որոշվում է մասնակցող թիմերի քանակից կախված, առավելագույն միավոր հավաքած թիմի միավորներից կախված և ընդհանուր թիմի կողմից լուծված խնդիրների ճիշտ պատասխանների քանակով:

Եզրափակիչ Փուլ

Ցուցանիշ	Առավելագույն Միավոր
Տեխնիկական իմացություն ու վերլուծություն	40
Ստեղծագործական մտածողություն	30
Թիմային աշխատանք ու ներկայացում	30

Ժյուրի

- Մրցույթն անցկացնում է **վարողի կողմից**, որը հետևում է ընթացքին, պահում ժամանակը ու կանխում հնարավոր կանոնների խախտումները
- **Ժյուրիի անդամները** գնահատում են թիմերի աշխատանքները ըստ հստակ չափանիշների
- Գնահատականների ամփոփման համար գործում է **հաշվիչ հանձնաժողով**

Մրցանակներ և Շնորհակալագրեր

Մրցույթի եզրափակիչ փուլում կընտրվեն հետևյալ մրցանակները՝

- 🥇 **Առաջին տեղ, մրցանակներ մասնակիցներին և մարզիչին**
- 🥈 **Երկրորդ տեղ, մրցանակներ մասնակիցներին և մարզիչին**
- 🥉 **Երրորդ տեղ, մրցանակներ մասնակիցներին և մարզիչին**

Ըստ ժյուրիի որոշման կարող է շնորհվել նաև ԱՄԵՆԱ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԼՈՒԾՈՒՄ մրցանակ

Եզրափակիչ փուլի մասնակից բոլոր թիմերն ու նրանց մարզիչները կստանան՝

- Մասնակցության վկայագրեր
- Հուշանվերներ